Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
31.03.2011թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ 5980
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	545	9.11
դիմում	4264	71
բողոք	945	15.2
կրկնակի	270	4.5
կոլեկտիվ	9	0.1

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝1103

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	598	10.3
բողոք	505	8.4

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	205	3.4
կոմունալ-կենցաղային	26	0.4
շինարարական	43	0.7
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	23	0.3
բնութ. պահպանութ.		
առևտրի	1	0.01
կենսաթոշակային	123	2.3
առողջապահության	32	0.5
կրթական և մանկ. հիմն.	5	0.08
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2110	35.2
օրենսդրական	80	1.3
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	306	5.1
ապարատային		
այլ հարցեր	3020	50.5
սեփականաշնորհում	6	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 5980 նամակներից մոտ 10.3%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 15.2%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 8.4%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 35.2%-ն անընչվում է ֆինանսական հարցերին, մոտ 5.1%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները բաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 3.4%-ը առնչվում է բնակարանային, 0.4%-ը կոմունալ-կենցաղային, 0.7%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 50.5%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առընչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 4830-ին տրվել է գրավոր, իսկ 105-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 45-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն